

Հարցեր և առաջադրանքներ
Երկր: Արեգակնային համակարգ

Առարադրանք Google forms առցանց գործիքով՝

<https://forms.gle/qsSDogjxrLVicTPo8>

Հարցեր

1. Ինչո՞վ է պայմանավորված տարվա չորս եղանակների հերթափոխումը:
2. Որո՞նք են արևադարձի և գիշերահավասարի օրերը:
3. Ի՞նչ են բևեռային գիշերներն ու ցերեկները, և ինչքա՞ն է դրանց տևողությունը:

Երկրի տարեկան պտույտը Արեգակի շուրջը

Опубликовано 16.10.2018

Երկիրը պտտվում է ոչ միայն իր առանցքի շուրջը, այլև Արեգակի: Իր առանցքի շուրջը Երկրի պտույտն անվանում են **օրական պտույտ**, իսկ Արեգակի շուրջը՝ **տարեկան պտույտ**: Այդպես են կոչվում, որովհետև Երկիրն իր առանցքի շուրջը մեկ լրիվ պտույտը կատարում է մեկ օրում, իսկ Արեգակի շուրջը՝ մեկ տարում: Տարվա տևողությունը 365 օր 5 ժամ 48 րոպե 46 վայրկյան է: Չորրորդ տարվա փետրվար ամիսն ավելանում է 1 օրով, և օրերի քանակը դառնում է 29 օր, իսկ տվյալ տարին ունենում է 366 օր: Այդ տարին համարվում է **սահանջ** տարի:

Այն ուղին, որով շարժվում է մոլորակը, կոչվում է **ուղեծիր**: Այլ կերպ ասած՝ դա նրա հետագիծն է: Արեգակի շուրջը Երկրի պտտման ուղեծիրը գրեթե շրջանագիծ է: Արեգակի շուրջը Երկրի տարեկան պտույտի մասին կարելի է պատկերացում կազմել՝ դիտելով տելուրիում կոչվող սարքի աշխատանքը: Երկրի տարեկան պտույտով է պայմանավորված տարվա չորս եղանակների (գարուն, ամառ, աշուն, ձմեռ) կանոնավոր հերթափոխը, որն ունի հետևյալ երեք պատճառները.

ա) Երկրի պտույտը Արեգակի շուրջը,

բ) Երկրի պատման առանցքի թերությունը ուղեծրի հարթության նկատմամբ,

գ) տարածության մեջ նրա պատման առանցքի ուղղության անփոփոխ լինելը:

Այն կիսագնդում, որով Երկիրն ուղղված է դեպի Արեգակը, ամառ է, իսկ մյուս կիսագնդում՝ ձմեռ: Հունիսի 22-ին հյուսիսային կիսագնդում ամենաերկար ցերեկը և ամենակարճ գիշերը, իսկ հարավային կիսագնդում՝ ամենակարճ ցերեկը և ամենաերկար գիշերը: Դեկտեմբերի 22-ին հյուսիսային կիսագնդում լինում են ամենակարճ ցերեկը և ամենաերկար գիշերը, իսկ հարավային կիսագնդում՝ հակառակը:

Հունիսի 22-ը հյուսիսային կիսագնդում կոչվում է ամառային արևադարձի օր, իսկ դեկտեմբերի 22-ը՝ ձմեռային արևադարձի օր:

Սեպտեմբերի 23-ին ու մարտի 21-ին գիշերվա և ցերեկվա տևողությունները հավասարվում են: Հյուսիսային կիսագնդում մարտի 21-ը կոչվում է գարնանային գիշերհավասարի օր, իսկ սեպտեմբերի 23-ը՝ աշնանային գիշերահավասարի օր:

Այլ է պատկերը բևեռներում. մարտի 21-ից մինչև սեպտեմբերի 23-ը վեց ամիս Հյուսիսային բևեռում ցերեկ է, որը կոչվում է **բևեռային ցերեկ**: Այդ նույն ժամանակամիջոցում Հարավային բևեռում գիշեր է, որը կոչվում է **բևեռային գիշեր**:

Սեպտեմբերի 23-ից մինչև մարտի 21-ը Հյուսիսային բևեռում լինում է բևեռային գիշեր, իսկ Հարավայինում՝ բևեռային ցերեկ: